

պապա գիւղի մօտեր կան բնածդային ջրոյ աւազաններ : Նոյնը կը գանուի նաև Առաքար և աւերեալ Նախշի-Նարզիզ գիւղերու մօտեր , միջին մեծութեամբ աւազաներու մէջ : Յետին ջրոյ վրայօք տեղացւոց մէջ առասպել մը կայ , իբրև թէ եկաւորները խօսենաւն պէս՝ արիւն կը զառնայ և մասնաւոր յարգանօք կը մօտենան : Եցնջակի բաժնին մէջ Գաղ (Գեալ)՝ Ճարաճուր գիւղի մօտեր հանդիպեցայ Հանքաջրոյ աւազանի մը , իսկ Որուատու վիճակին մէջ՝ Բիսս և Ալագի գիւղերու միջոց կայ բնածդային ջրոյ աղբիւր մը :

Ճարունակելի

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ԹԵՌԴՈՍԻԱ-ԿԱՖԱ. ԳԱՂԱՔԻՆ ՏԱՒՐԻՈՅ  
ԵՒ ՀԱՅՈՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ



Կ Ա Ւ Ա (Կ Ա Ֆ Ա - Ք է Ֆ է ) Ա Ն Ո Ւ Ն Ը

(Տես Հատ . Խթ . յ'էջ 160 )



**Լ**ՈՒԴՈՍԻՈՅ պատմութեանս ընթացքին մէջ ընկնանրապէս՝ և « Հայկազոնք ի Տարիհա » զիխոյն մէջ մասնաորապէս աշխատեցանք ցուցընելու , որ Հայք Ժ զարէ սկսեալ տարիիական թերակղզոյն մէջ բնակութիւն հաստատել են . ճիշդ Ժ զարան մէջ տաշին անզամ կը լսուի ի պատմութեան <sup>1</sup> կաւա (Caprha) անունը : Հնախօսից ամենայն ջանք ի զուր ելած են , այս անուան ծագման կամ ստուգաբանութեան մասին : Ոմանք տաճիկ քեաֆիր կամ կեառուր բառերուն համառոտութիւնը կը համարին Քէֆէ տաճկահնջիւն անունը , և ապա առ մեզ , տառալարձութեան կանոնով , ի կաֆա փոխուած . այլ՝ քէի (հաճոյք) բառէն ածանցեալ կը համարին : Մեզ՝ այս երկու մեկնութիւնը ևս անաեղի կ'երեան , և փոխանակ ի տաճկերենէ ի հայ տառագրձնելու այդ անունը , այնպէս կ'ենթաղրեմք , որ տաճիկը կաւա հայահնիւն անունը , ըստ իրենց լեզուին տառալարձութեան կանոնին ի Քէֆէ փոխած են : Եթէ յանդգնութիւն չհամարին ընթերցողք , մեք այս անունն ևս , Քըրարմանուան :

1. De administrando imperio. Կոստ. Պերփեռուժենի:

ձեռվլ, երկու մասն բաժնելով, այսպէս կատ ա, կ'ուզեմք մեկնել որ հայերէն կաւ և ա (փոխանակ զի զրուած) բառին և տառին բարբութիւնն է այս անոն : կաւ հայերէն կը նշանալիք հող, մանաւանդ բրուտի հող *terre glaise*. ա տար, ինչպէս յայտնի է ամենայն հայագիտաց, ցայսօր Հայաստանի շատ գառապաց մէջ, փոխանակ է օժանակակ բային տեղ կը զործածեն. օրինակի համար փոխանակ մարդ է ասելու, կ'ասեն մարդ ա. երախայ է = երեսէ ա. մեծ է = մեծ ա. փոքր է = փոքր ա և այն. ուրեմն կաւա ասելով՝ հայերէն պէտք է հասկնալ, կաւ է, կաւերէն է. ցայսօր ևս, եթէ մէկը թէկողուսից քաղցի երեք կողմէն պատած բլուրներուն վերայ նայի, մանաւանդ անձրնէ վերջ, խաղոյն նոյն բառերը պէտք է զրոցէ կաւ է, կաւեղէն են թէկողուսից շուրջը պատած բլուրները :

Եւ որովհետև յընթացս պատմութեան քաղաքիս տեսանք, որ ի Ժ զարու, նախ քան զԳենուացիս ի ցամաց ելած են աստ ի թէկողուսիա՝ հայկազունք, և առաջին անգամ նոյն Ժ զարուն մէջ կը լսուի ի պատմութեան կաֆա անունը փոխանակ թէկողուսից, ուստի այս հանգամանքներէն կը հետեւցնեմք, որ Հայք ելնելով ի ցամակ, թէկողուսից մէջ և հայելով Ալանաց և Գիդաց ապա և Հոնաց աերափներուն վերայ տիրող բլուրներուն որ կը պատեն զթէկողուսիս, և միանգամայն միտք բերելով, այդ հայ Անեցի ժողովուրդը Շիրակայ գեղազուարճ գաշտերը և Մաղկոցաց—Զորոյն ակնասպարաք տեսարանը, անշուշտ բացագանչել են, թէ՝ « Այս ի՞նչ թէկողուսիս, ի՞նչ տուրք Աստուծոյ, կաւ ա, կաւ է չորս զի՞ն » : Մեզ հաւանական կ'երեւի որ այս բացագանչումը կամ բացատրութիւնը, ապա իբրև յասուկ անուն տեղոյց անցել է առ Գենուացիս, որք ի սկզբան, ինչպէս հին յիշտակարանաց մէջ կը կարդամք, մեր և տառը թիւ զբերով զբել են, ապա մէկ և Քուակ յետոյ կարողացի են Հայոց և (կես զի ձայնով տառը) երկու Շ ֆի՞ն ճիշդ հնչել կամ յարմարագրել :

Առ այժմ առաւել գորաւոր փաստեր չունենալով՝ մեզ հաւանական երեցածը, իշխեցինք իբրու մեկնութիւն կաւա կամ կաֆա անուան զրել, հայ լեզու յառաջ բերելով բառիս ստուգութիւնը : Արդ եթէ մեզ հաւանական երեցածը զիտոնց ևս ընդունելի լինի, մինչև ցայսօր անցայտից կամ անծանօթից կարգը անցած մի պատմական քաղաքի անուան ծագումը, պարզուած և յայտնի կը համարիմք :



## ՄԵԾԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԽԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ԿԱՖԱ

### ԱՌ ԳԵՆՈՒԽՑԻՎԱՐ

Այժմ մեզ անտարակոյս է որ՝ այս մեծ գաղթականութենէ առաջ կային ի կաֆա, ի Սուրբաթ, ի Սոլյայա բազմաթիւ Հայեր, իբրնոց վանքերով, եպիսկոպոսներով և եկեղեցիներով, որք գենուացոց աջակից ոչ աննշան, այլ նշանաւոր և բարեկեցիկ կեանց կը վարէին, որ և պատճառ կամ զրգիւ եղած է այս մեծ գաղթականութեան ազգիս յԱքսէրայէ դէպ ի կաֆա :

1239 ին Զաքարէ մեծ իշխանի որդւոյն Շահնշահի պայտատութեան միջոց, որ կը ակրէր Անոյ՝ Բաղրատունեաց գեղապանծ շահաստանին, Զարմա խանն թաթարաց, մեծ բազմութեամբ յարձակելով քաղաքին վերայ, քիչ ժամանակամիջոցի անհնարին կոտորած կը հասցնէ քաղաքացեաց, և զարերու միջոց շինուած գեղապանծ քաղաքը աւերակաց կոյտ կը դարձնէ . այս գէպքս ազգային ականատես պատմիչք արժանապէս ողբացել են : Կաֆայեցի յայսմանուրբին անանուն գրիշը, ըստ օրինակի այլոց պատմապոաց, ողբալով քաղաքին կործանուոր և պատճառ բերելով թէ « ոչ արդարութիւն քաննեցաւ ի մեզ.... » (կը յաւելու) « Բաղրամի Թողեալ զոսկէ զօծ պարասս և զժաղկաւէտ զաշաս, զվա « Նորայս և զեկեզեցիս աւեր, չուեալ եկին ի յԱխսարայ, որ է ի մէջ Հաշտար. « խանու և Ղազանու . ոմանք զնացին ի ձուղայ, ոմանք ի Վան, և այլք ի « Սիս : Եւ որը յԱխսարայ եկին, հրաման առեալ ի թաթար խանէն բնակեցան « անդ, ոչ բազում ժամանակս, որ էր զայս Զիօն (1299) » :

Յիշատակարանիս խօսքերէն կը հետևի որ՝ յետ կործանման Անոյի ի Զարմա-խանէ (1239) բազմութիւն Անեցոց անցել են ի թաթարաստան, յընթացս 60 տարիներու, և անդ միշտ նեղութիւն կրելով թաթար իշխեցողաց ձեռքէն, ազատուութեան մի հնարք գոտնելու աշխատել են, և « անդ բնակեցան ոչ բազում ժամանակս, որ էր զայս Զիօն (1299) » : Թէպէտ միջին է սակաւ մի յիշտառ-կարանիս առած բացատրութիւնը, այլ եւ այնակս կը համանամ որ 1299 էն սկսել են<sup>1</sup> Արքերացի հայերը բանագնացութիւնը ունենան կաֆայեցի ազգայնոց հետ, և այդ բանագնացութեանց հետևանք եղած է բիւրալորաց Գաղթը ի կափա 1230 ին, վասն զի կը յարէ յիշտառկազիրը . « Մինչ նեղեալ եղեն ի թաթա-« բացն գեսպան յղեն ի Ղոփմ առ իշխանն Զինիկազա » :

Գենուայի իշխանին անոնը շի զներ գրուր, առ որ ուղղեալ են Արքսէրայցի հայ գեսպանք, այլ որովհետու նոյն միջոցին երկու իշխեցողք՝<sup>1</sup> կը յիշուին ի կափա, Ալլմերոյ և կոռալոյ, սոցամէ միոյն իշխանութեան միջոց անշոշա, եկած են հայ գեսպանք ի կափա և պայմաններով դաշինք զնելէն յետոյ, եղած է բիւրալոր Հայկաղնաց գաղթականութիւնը յԱրքէրայէ : Յիշտառկարանը կը յաւելու . « Ուկտ զնեն ընդ իշխանին Ֆէօզօսուտ, ելեալ ի յԱխսարայէ « իշխանը և ազնիւք (հայկաղնաց) և հասարակ մոլովորդք՝ վատերալք զինու, « պատերազմելով ընդ թաթարացն ճեխբեալք զան ի Ղոփմ, և բնակին ի « Ֆէօզօսիս, ի կազարաթ և ի Սուրբիաթ և ի կողմանս սոցա . այս եղէ « Զիթ (1230) թուին » :

Ուշադրութեան արժանի են յիշտառկարանիս խօսքերը, « վառեալք զինու », պաղթականաց մէջ բազմութիւն հայ զինուորաց եղած են, իրենց սպայներով, խմբավարներով և զօրապուխներով . զի քիչ ժամանակ վերջը, աստի ի կափայէ 40,000 հայ զինուորներ անցել զնացել են ի Փոսոյեան կամենից, պաշտպանե-

1. Ըստ ցուցակի պրոֆեսոր Իւրգելիս Alberto Mallone 1297 ին ընտրուած և Corrado de Roccio 1316-1332.

լու այն հայկական քաղաքը, բնադրէմ յարձակմանց թաթարաց, լուծելով միանգամայն Անոյ կործանման վրէմքը։ Բայտ յիշատակարանին «Պատերազմելով ընդ թաթարացն ճեխպեալք գան ի Պոփիմ»։

Անշուշտ թաթարք ամենայն ջանք արել են, որ ի թաթարասան մասն, և բիրաւոր հայ աշխատասկը ժողովուրպը, շենցնեն և մշակեն իրենց անապատները։ Այս այս գէպքը պատահել է 1778 ին ևս, երբ զրիմեցի հայկազանց հրաման եղել է, թողով այն աշխարհքը և երթալ բնակիլ ի Ռուսաստան, տեղացի թաթարք ամենայն ջանք ի գործ զրիլ են, արգել լինելու Հայոց գաղթականութեան ի Դրիմէ, այլ ի զուր։ Յիշատակարանին զրուցած տեղուանք, ուր հոծ խիտ առ խիտ բնակիլ են Հայկազունք, արևելեան – հարաւային մասունք են թերակզբույն։ Լազարաթ և Առորխաթ մօս են կաֆայի, Ղարապազարը 62 վերստ է ի կաֆայէ, այս միջոցին ի Սուրբա ևս բազմացել են հայկազունք, այնպէս որ ըստ յիշատակարանին, ի պաշտո և ի լերինս լցուցել են շենքերով։ « Յայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգիւզս և զգաւասս »։ այսինքն միանալով արդէն ի կաֆա, ի Առորխաթ և ի Սուրբա հինէն բնակող տզբայնոց հետ։ Եթէ այս ենթազորութիւնը շինի, յայնժամ բառը բոլորովին ակարմար և անսուրզի պէտք և համարել, զի անդէն ի թերակզբիս մտնալնուն պէս, իսկոյն բազմանալն և զօրանալն անկարելի է։ « Շինեցաք տունք հարիւր « հազար, և գեկեղեցի հազար, և ի առէ հոնականաց պարսպեցին ի քաղաքն « Ֆէօզոսիա »։

Նոր եկող հայկազանց առանձին տեղի բնակութեան կամ թաղ որոշուած է, և հաւանական կ'երեւ, որ ուխտի կամ գաշանց զրին մէջ, գեսպանաց Հայոց ընդ իշխանին կաֆայի, այս ևս պայման զրուած է որ, Հայք պարտապեն իրենց թաղը, ընդումէմ հասարակաց թշնամեաց, այն է թաթարաց, զորս յիշատակարանս կը շփոթէ Հոնաց հետ։ Այս պարիսպը, քաղաքիս արևելեան ծայրը շինուած ֆռէնկհիսար կոյուած գենուացի պարապէն կցելով, ընդ հարաւ լեռներուն վրայէն հասուցել են Հայք մինչև ցիկսիսային ծայր քաջաքին, որով քաղաքին հարաւային մասը, լերանց ելեկշներով, եղած է թաղ հայոց։ Այդ մասին մէջն են ցարդ ևս կանգուն մնացած ԺԲ-Դ գարէ շինուած շորս հայոց եկեղեցիք, այլ շատերը հիմնայատակ կործանել են։ Այլ որովհետեւ բիրաւոր զաղթականք այդ փոքր սահմանին մէջ կարող չէին ամփոփուիլ, այնպէս կը համարիմք, որ յիշատակարանիս մէջը յիշուած « իշխանները և ազնիւները » ազգիս, կաֆայի մէջ հաստատել են բնակութիւն, մայրաքաղաք անուանելով զնա, իսկ մեացեալ հասարակ ժողովուրպը և գիւղացիք սփուռել են մինչև ցղարազար ցՍուրբաթ և կազարաթ, և մեծ բազմաթեամբ ի Սուրբայս Գենուացոց (Սուրբա), տակաւ յիշատատորիս, յօր և այն։ Հայաբնակ գիւղերուն մեծ մասը կաֆայի մերձաւոր տեղուանք եղած են, ինչպէս կէօք-ֆէփէ, Սուլթան-Մալա, Նախիջևան (այժմ Վոլգիչքա), Օրթալան, Թօփիլու, Ղշլա, Սոլոք-Սու և այլն։

Բայսմաւորաց ցցուցած ճանապարհին վերայ, ուր Հայք խիտ բնակութիւն

Հաստատել են, մինչև ցայսօր ամենածախ ժամանակին ձեռքէն մաղապուր, կը գտնուին տակաւին, երբեմ զթերակղղիս բազմամարդող և շենցնող Հայոց հետքերը • զի յընթացս 550 տարեաց սուր և կոտորած և ապա աստի ևս այլ հեռաւոր աշխարհի խմբովին գաղթականութիւն ազգիս, մեծապէս տկարացուցել հայութիւնը Ղրիմու մէջ, այլ չեն կարողացած իսպառ բնաշինջ կորուսանել :

Ամենուրեք հայ Եկեղեցեաց տիրագին աւերակք, ցիր ու ցան հայ յիշատակարանք, պատերու մէջ, ասնզուխներու վերայ, աղբիւրներու ճակատ. ցայսօր թէողոսիոյ որ կողմը մարտ փորէ, անշուշտ երկրիս խորէն դուրս կը հանէ հայկական խաշքար մի, ազգային յիշատակարանով:

Բաց ի բազմաթիւ եկեղեցիներէ, բերգերէ և պարիսպներէ, հայախօս յիշատակարաններով, ազգայինք մասնաւոր ջանք արել են անջրդին կաֆայի մէջ լեռներէն ագուցայներով քաղցրահամ ջրեր իջցրներու, դրաշմելով աղբիւրներուն ճակատը, շինողաց կամ շինել տուրքաց անունն կամ մականունն, ինչպէս «Մէլքինս Քափանակին » , որդ ցարդ կանզուն կեցել են :

Ազգայինք, ինչպէս ամէն տեղ, աստ ևս ի կափա իւրեանց սեփական աշքացցութեամբ և հաւատարիմ գործունէութեամբ սիրելի կը լինին քաղաքին տիրող զենուացւոց. ի նոցանէ Նախարար, Պարոն և Խշխան պատուանուններով կը մեծարին. Կ'անենան առանձին հայկական զինաւորք, պահակապահնք (gendarmerie) որդ իրենց գորազիսով կը կանգնին պարիսպ ընդդէմ այլազգեաց յարակմանց :

Աբեղայք և անապատաւորք վանքերու մէջ, և անտառներուն խորեր, զատ զատ հողաններու մէջ կը քաշուին հեռացեալք ի զրազմանց աշխարհի. վանաց մէջ նշանաւոր են Գեմշակ կամ Քամճակ անապատները, յանուն Աստուածամօր Եկեղեցւովի Սուրբաթ, և Մողկան անապատը Ղշլա գիւղին մէջ, ուր կը պարապին ռամամիք, մշակելով իրենց հետ բերած քաղցրիկ աւանդ և դրաշմը հայութեան, այն է մեր նախնեաց նոխ լեզուն : Ընդօրինակած են այդ լանքերուն մէջ հարիւրաւոր հոգիխօս զիեանք և շքեղ պատկերազարդել են սուրբ կոտակարանց:

Ազգին մշակ կամ գեղացի մասը, խումբ խումբ սփառել են Ղրիմու հովասուն լերանց ստորոտը, գեղածիծազ անտառաց մօսերը, ուր կը բղխեն քաղցրահամ աղբիւրներ, և այն աեղեր զիւղեր և աւաններ սարքելով, ակօսարեկ կը պատօնն արգաւանդ զաշտերը :

Կաֆայի հարաւային մասը, գէպ ի սարերը, հայաբնակ նոր քաղաք կը լինի, բիւրաւոր հայ բնակօք և կը կրէ անուն ժովային հայաստան, Սուրբսաթ քաղաքը իւր մերձակայ Ս. Խաչ վանքով՝ բոլորովին հայոց քաղաք կը գառնայ. Սուտաղ (Soldaja Սուլդա) իւր բազմամարդ հայութեամբ մեծ - Հայաստան անունը կը կրէ, որում կը վիճակ Եւգինէոս Դ. Հոռմիմայ սրբազնին կոնքակը և ի կողմանն Մեծին Հայաստանու, ուր է եկեղեցին Սոլդայեցւոց <sup>1</sup> » 1432 :

1. In partibus Armenie majoris, in quibus Soldajensis ecclesia sita est. Բրեւէ էջ 88.